ՆԵԼԼԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1219-1226 ԹՎԱԿԱՆՆԵՐ)

DOI: 10.24234/JOURNALFORARMENIANSTUDIES.V4I63.79

Ամփոփում

Սույն ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Կիլիկյան Հայաստանի պատմության ամենակարևոր և առանցքային նշանակություն ունեցող մի ժամանակաշրջանում (1219-1226 թվականներին) Կիլիկիայի պետության և եկեղեցու հարաբերությունների պատմությունը՝ ընդգծելով Հայոց եկեղեցու դերակատարությունը Կիլիկիայի պետականության պահպանման ու ամրապնդման գործում: Քննարկվող ժամանակաշրջանի կարևորագույն իրադարձությունները քննության առարկա դարձնելով՝ հոդվածը լուսաբանել է ՀայԱռաքելական Եկեղեցու և հոգևոր կենտրոնների դերակատարման պատմության առանցքային դրվագները Կիլիկյան Հայաստանի քաղաքական և հոգևոր բնագավառում: Կարևորվել են նաև Կիլիկիայի հիմնադիր արքա Լևոն Մեծագործի դստեր՝ Զաբել Ռուբինյանի խնամակալների մասին տեղեկությունները՝ միջնադարյան պատմիչների երկերի, ինչպես նաև ժամանակակից գիտական գրականության մեջ առկա տեսակետների համադրությամբ՝ ընդգծելով Հայ առաքելական եկեղեցու դերակատարումը պետական կառավարման համակարգում:

Ուսումնասիրության կիզակետում Ամենայն հայոց կաթողիկոսական նոր ընտրությունների անցկացման պատմության մանրամասներն են, որ տեղի են ունեցել կաթողիկոս Հովհաննես Սսեցու մահվանից հետո՝ բավական սուր և լարված պայմաններում:

Սույն հետազոտությունն անդրադարձել է, թե ինչպիսի պայմաններում է նոր հայրապետն ընտրվել Կոստանդին սպարապետի օժանդակությամբ, ինչպես նաև առանձնակի կարևորությամբ շեշտադրել է Ամենայն հայոց կաթողիկոսի և եկեղեցու դերակատարումը Կիլիկիայի պետության ներքաղաքական զարգացումներին՝ մասնավորապես Զաբել թագուհու ու Անտիոքի դքսի որդու՝ Ֆիլիպի ամուսնությունն ու նրա մահը, ինչպես նաև Զաբելի և սպարապետ Կոստանդինի որդու՝ Հեթումի ամուսնության վերաբերյալ մանրամասն տեղեկությունները: Երևան են հանվել նաև Կիլիկիայի հայոց պետության և եկեղեցու փոխհարաբերությունների պատմության +ուսումնասիրման այլ կարևոր և վիճահարույց հարցերի կարգավորման խնդիրները, որոնց արդյունքում

ներկայացվել է Հայոց եկեղեցու դիրքն ու դերակատարությունը, ինչպես նաև եկեղեցու ղեկավարության ակտիվ գործունեությունը 1219-1226 թվականների Կիլիկիայի հայկական թագավորությունում տեղի ունեցող ոչ միայն եկեղեցական, այլև ներքաղաքական կյանքի շրջանակներում, ինչն էլ նպաստել է երկրի հետագա զարգացմանը:

Բանալի բառեր և արտահայտություններ. Կիլիկիա, պետություն, եկեղեցի, կաթողիկոս, սպարապետ, փոխհարաբերություն, կառավարում, թագուհի, խնամակալ:

Ներածություն

Կիլիկիայի հայոց պետության և Հայոց եկեղեցու փոխհարաբերությունների պատմության կարևորագույն և առանցքային ժամանակաշրջան են համարվում 1219-1226 թվականները: Այն կարևորվում է նրանով, որ 1219թ. երկարատև հիվանդությունից հետո մահացավ Կիլիկիայի հիմնադիր թագավոր Լևոն Մեծագործը, որից հետո երկիրը կառավարվում էր խնամակալների միջոցով: Անշուշտ, առաջնային և հրամայական է քննարկվող ժամանակաշրջանում Կիլիկիայի հայոց պետության և Հայոց եկեղեցու հարաբերությունների և Հայ Առաքելական Եկեղեցու դերակատարման լուսաբանումը, հատկապես բարձրագույն հոգևորականության գործունեության վերհանումը պետական քաղաքական կառավարման ոլորտում:

Մեթոդաբանությունը

Հետազոտության համար հիմք են հանդիսացել պատմավերլուծական և ժամանակակից գիտական գրականության վերլուծության մեթոդները:

Քննարկում

Կիլիկիայի պետության գոյության ողջ ընթացքում Հայոց եկեղեցին շարունակում էր ազդեցիկ դիրք ունենալ պետական-քաղաքական կառավարման տիրույթում, ներկա լինել արքունական կարևոր ժողովներին և մասնակցություն ցուցաբերել գրեթե բոլոր կարևոր որոշումների կայացմանը: Ինչպես հաղորդում է Ս.Բոռնազյանը, երբ 12-րդ դարի վերջին կազմավորվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, ամրապնդվեցին և իրենց զարգացումն ունեցան թագավորի և կաթողիկոսի տնտեսական և քաղաքական կապերն ու համագործակցությունը (3): Պատմական այս կարևոր ժամանակաշրջանում Եկեղեցու իրավասության ներքո էր մնում դատական համակարգի մի մասը, քանզի Սսի արքեպիսկոպոսական ատյանը և գավառային որոշ դատարաններ ղեկավարվում էին Հայոց եկեղեցու ներկայացուցիչների կողմից: Այդուհանդերձ, այսքանով չի սահմանափակվում Հայոց եկեղեցու և հոգևորականության գործունեությունը, քանզի վերջիններս իրենց մասնակցությունն են ցուցաբերել հայոց պետության կառավարման ոլորտի այլ բնագավառներում

նս։ Մասնավորապես տարբեր տարիներին հայոց արքաների հանձնարարություններով հայ հոգևորականությունը մասնակցում էր տարբեր պետական գործերի, հատկապես դիվանագիտական բնագավառում։ Հարկ է նշել, որ միջնադարյան պատմիչների երկերում քիչ տեղեկություններ են պահպանվել Հայոց եկեղեցու պատմության և հատկապես պետություն-եկեղեցի համագործակցության վերաբերյալ։ Դրա հիմքում հավանաբար ընկած էր այն, որ միջնադարյան պատմիչների ճնշող մեծամասնությունն իրենց երկերում առավել շատ ուշադրություն են հատկացրել Կիլիկիայի ռազմաքաղաքական անցուդարձերին, և առավել սակավ՝ հոգևորականների գործունեությանը, մշակութային հիմնախնդիրներին։

Կիլիկյան Հայաստանում Հայոց եկեղեցու հզոր դիրքի և դերակատարության մասին է վկայում միայն այն հանգամանքը, որ հայոց պետության մեջ հաշվվում էին հինգ արքեպիսկոպոսություն և տասնհինգ եպիսկոպոսություններ, որոնց կենտրոններն էին համարվում քաղաքներն ու վանքերը (3)։ Հ. Ոսկյանը կարծիք է հայտնում, որ հայոց պետությունում 11-14-րդ դարերում հիմնադրվել և գործել են հարյուրից ավելի մանր և խոշոր վանքեր, եկեղեցիներ և անապատներ, որոնցից հատկապես նշանավորներն էին Դրազարկի, Արեգի, Արքակաղնի, Սկևռայի, Ակների, Մաշկևորի և այլ վանքերն ու եկեղեցիները (13), ինչը վկայում է այն մասին, որ Կիլիկիայի հայոց պետությունը հովանավորել է Հայոց եկեղեցին և ակտիվորեն համագործակցել եկեղեցական ներկայացուցիչների հետ։ Մյուս կողմից՝ Ս. Բոռնազյանը կարծում է, որ Լևոն Մեծագործը և Կիլիկիայի հաջորդ ղեկավարները հովանավորչական և տնտեսական օժանդակություն էին ցույց տալիս վանքերին և եկեղեցիներին՝ հիմնելով դպրատներ ու վարժարաններ (3)։ Այնքան մեծ է եղել հոգևորականների դերը, որ 13-րդ դ. սկզբներին Սսի արքեպիսկոպոսական ատյանի ղեկավարումը հանձնվեց թագավորական տան անդամներին։ Այդ մասին է վկայում Ալիշանը, ում տեսակետի համաձայն՝ Հեթում Ա արքայի եղբայր Բարսեղը հիշատակվում է որպես արքայազուն եպիսկոպոս (1), իսկ մյուս եղբայրը՝ Գռներ վանքի եպիսկոպոս (3)։

Ի վերջո, Լևոն Մեծագործի մահից հետո, իր կտակի համաձայն, երկրի կառավարումը հանձնվեց խնամակալներին, թեև նրանց թվաքանակի շուրջ ժամանակակից գիտական գրականության մեջ առկա են տարբեր կարծիքներ։ Այսպես՝ հետազոտողներից Կ. Մութաֆյանը, անդրադառնալով Զաբելի խնամակալներին, նշում է միայն սպարապետ Կոստանդինի անունը (11)։ Անշուշտ, դժվար է ընդունել այս տեսակետը, քանզի Լևոն Մեծագործը, լինելով բավական հասուն և խելացի քաղաքական գործիչ, դժվար թե երկրի ամբողջ իշխանությունը կենտրոնացներ մի անձնավորության ձեռքում։ Ի

տարբերություն Կ.Մութաֆյանի՝ Վ. Տեր-Ղևոնդյանը (18), Գ.Միքայելյանը (10), Ս. Բոռնազյանը (5) և Անապատականը (2) Զաբելի խնամակալների թվին դասում են Կոստանդին սպարապետին և պայլ Ադանին: Ինչպես նկատում ենք, ուսումնասիրողների տեսակետները տարբերվում են միմյանցից: Սակայն այսքանով էլ խնդիրը չի ավարտվում, քանի որ, ըստ Լ. Տեր-Պետրոսյանի, խնամակալների մեջ, բացի վերը նշված երկու անձից, եղել է նաև հայոց կաթողիկոս Հովհաննես Սսեցին (20): Լ. Տեր-Պետրոսյանի կարծիքը ժամանակին նկատել է նաև Մ. Օրմանյանը, որը նշում է. *«Յովհաննէս կաթողիկոս նոր կերպարան մըն ալ զգեցած էր թագաւորութեան խնամակալ նշանակուելով, եւ այնուհետեւ քաղաքական գործունեութեան մեծ ասպարեզ մը բացուեցաւ իրեն, իր կեանքին վերջին տարւոյն»* (21), *ինչը* առավել ճիշտ ենք համարում: Այստեղ հետազոտողը մի տեսակետ է հայտնում, համաձայն որի՝ Հովհաննես կաթողիկոսի համար նոր չէր քաղաքական գործերով զբաղվելը, սակայն նրա համար լրացուցիչ դժվարություն էր այն հանգամանքը, որ մյուս խնամակալները որոշակի անհամաձայնություններ ունեին միմյանց հետ (21):

Կարծում ենք, որ Մ. Օրմանյանի տեսակետը անխոցելի է, քանի որ թե՛ պայլ Ադանը և թե՛ Կոստանդին սպարապետը ահռելի իշխանություն ունեին երկրում, և երկուսն էլ ձգտելու էին բացարձակ իշխանության: Այս պայմաններում շատ ճշգրիտ է եղել Լևոն Մեծագործի քայլը, որը խնամակալ է նշանակել նաև կաթողիկոսին, քանզի Հայոց եկեղեցին և նրա կառույցի ղեկավարն այն օղակն էին, որ կարող էին հարկ եղած ժամանակ հաշտեցնել իրար դեմ պայքարող նախարարներին՝ հօգուտ հայոց պետության: Այն, որ Զաբելի խնամակալների մեջ եղել է նաև կաթողիկոսը, ապացուցվում է նաև պատմիչների վկայություններով: Մասնավորապես այդ մասին բացառիկ տեղեկություն է հաղորդում Կիրակոս Գանձակեցին, որը կարևոր վկայություններ է բերում: Ըստ պատմիչի՝ Լևոն Մեծագործի մահից հետո նշանակվել է երեք խնամակալ (4): Այս իրավիճակը երկար չտևեց, քանզի կարճ ժամանակ անց Սիր Ադանը սպանվեց: Միքայել Ասորին նշում է, որ լավ եղավ նրա սպանությունը, քանզի վերջինս խորհում էր իշխանության գրավման համար (9): Նույն հեղինակի պնդմամբ՝ Ադան պայլը եղել է ազգությամբ հույն (9):

Ադան պայլի սպանությունից հետո Զաբելի խնամակալներից մնացին երկուսը՝ Կոստանդին սպարապետը և հայոց կաթողիկոսը, թեև հանուն ճշմարտության պետք է նշել, որ երկրում ավելի մեծ իշխանություն ուներ հայոց սպարապետը, իսկ պետության համար կարևոր հարցերում նա մշտապես համաձայնեցնում էր իր գործողությունները հայոց կաթողիկոսի հետ: Այլ խոսքով ասած՝ Լևոն Մեծագործի մահից հետո էլ պետություն–եկեղեցի փոխհարաբերությունները գտնվում էին բավական բարձր

կարգավիճակում, և Հայոց եկեղեցին շարունակում էր իր մասնակցությունն ունենալ երկրի կառավարմանը։ Ավաղ, կաթողիկոս Հովհաննես Սսեցուն նույնպես վիճակված չէր երկար լինել Զաբելի խնամակալի կարգավիճակում, քանզի մոտավորապես 1220թ. նա մահացավ և թաղվեց Դրազարկում. «Եւ յայսմ ամի վախճանեցաւ կաթողիկոսն Հայոց տէր Յոհանէս» (14)։

Ընդհանուր առմամբ, Հովհաննես Սսեցու աթոռակալման տարիներին Հայոց եկեղեցին զարգացավ, որևէ լուրջ ցնցումներ տեղի չունեցան, հաջողությամբ շարունակվում էր պետություն–եկեղեցի համագործակցությունը, և Հայոց եկեղեցին երկրի համար կարևոր պահերին միշտ կանգնում էր արքունիքի կողքին։ Հովհաննես Սսեցու մահվան հետ կապված որոշակի տեսակետ է հայտնում Անապատականը, համաձայն որի՝ հայոց կաթողիկոսի օրոք հայ-լատին կրոնական հարաբերությունների մեջ հիշատակության արժանի իրադարձություններ չկային (2)։

Փաստորեն, Անապատականը ևս վկայում է, որ Հովհաննես Սսեցին մի կողմից ակտիվ է եղել քաղաքական կյանքում, իսկ մյուս կողմից էլ անարատ է պահել Հայ Առաքելական Եկեղեցու դավանանքը և միջեկեղեցական հարաբերություններում չի կատարել որևէ քայլ, որ կվնասեր Հայոց եկեղեցուն կամ նրա հեղինակությանը։

Առաջ եկավ նոր կաթողիկոսի ընտրության խնդիրը։ Գ. Հարությունյանը կարծում է, որ սպարապետը, լինելով ճկուն գործիչ, շատ լավ հասկանում էր խնդրի կարևորությունը, և նրա համար կարևոր էր ծավալվող քաղաքական իրադարձությունների ժամանակ Հայոց եկեղեցու դիրքորոշումը, ուստի պատահական չէր Կոստանդին պայլի անմիջական մասնակցությունը (6)։

Այժմ տեսնենք, թե ինչ տեղեկություններ կան միջնադարյան պատմիչների երկերում։ Այսպես, Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկն անդրադառնում է այս ընտրությանը, սակայն շատ հակիրճ միայն նշում է, որ նոր կաթողիկոս դարձավ Կոստանդին Բարձրբերդցին, որը շատ առաքինի անձնավորություն էր (15)։ Նմանատիպ տեղեկույթ կա նաև ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում (7)։ Վերոնշյալ խնդրի վերաբերյալ մեզ որոշակի տեղեկություններ է հաղորդում նաև Սմբատ պատմիչը, որի հաղորդածը կարող է առավել օգտակար լինել մեր հետազոտության համար։ Նա նշում է, որ սկզբնական շրջանում կաթողիկոսի ընտրության ժամանակ իշխանների ձայները բաժանվեցին երկու մասի, բայց քանի որ չկար արքան, այս հարցում վճռորոշ եղավ սպարապետի դիրքորոշումը (17)։ Եվ շատ բնական է, որ Կոստանդինը և իր համակիրները պետք է այնպիսի ընտրություն կատարեին, որ նոր հայրապետն աջակցեր իրենց պետական–քաղաքական կառավարման

ասպարեզում։ Մ. Օրմանյանը կարծիք է հայտնում, որ, թեև նշյալ պահին կային մի քանի կաթողիկոսի թեկնածուներ, Կոստանդին սպարապետը, որն արդեն երկրում ուներ ահռելի իշխանություն, կանգ առավ Կոստանդին Բարձրբերդցու անվանը (22)։

Մ. Օրմանյանի կարծիքով հայոց նոր հայրապետը գահին է բազմել իր արժանիքների համար, այլ ոչ թե ազգատոհմի, ինչպես նախկինում էր կատարվում (22)։ Դեմ չլինելով Մ. Օրմանյանի տեսակետին՝ կցանկանայինք նաև հավելել, որ, բացի որոշակի արժանիքներից, էական է եղել նաև այն, թե ո՛ր ազգատոհմից է նա, և ինչպիսի՛ հարաբերություններ է ունեցել սպարապետ Կոստանդինի և նրա մերձավորների հետ, քանզի նման պատասխանատու պահին սպարապետը չէր կարող կաթողիկոսի աթոռին բազմեցնել այնպիսի հոգևորականի, որը չպաշտպաներ իրեն պետական–քաղաքական կառավարման գործում։

Մ. Օրմանյանը Կոստանդին Բարձրբերդցու ընտրությունը նշում է 1221 թվականին (22)։ Ամեն դեպքում, հասկանալի է, որ Կոստանդին Բարձրբերդցու ընտրությունը հաջող էր, քանզի նա զարգացած և պատվարժան անձնավորություն էր, վայելում էր Կիլիկիայի ղեկավարության մեծամասնության համակրանքն ու սերը։

Նշենք նաև, որ 1220-ական թվականները Կիլիկիայի պատմության համար բավական խառը ժամանակաշրջան էին, և հայոց թագավորությանը սպառնում էին շատ երկրներ։ Քաղաքական այսպիսի պայմաններում 1222 թ. որոշվում է լուծել Զաբելի ամուսնության հարցը։ Որոշվեց Զաբելին ամուսնացնել Անտիոքի դքսի որդու՝ Ֆիլիպի հետ։ Այդ մասին Սմբատ պատմիչը հետևյալն է նշում. *«Իսկ ի թուին ՈՀԱ 671=1222 փեսայացուցին և թագաւորեցուցին զորդի կոմսին Տրապոլսոյ և բրնծին Անտիոքու՝ Զֆիլիպն տանն Հայոց, տալով նմա ի կնութիւն զդուստր թագաւորին Լեւոնի զԶապէլն. . .»* (17)։ Իսկ ահա Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ դրանում որոշակի դերակատարում ունեցավ նաև Հայոց եկեղեցին՝ ի դեմս հայոց կաթողիկոսի (4)։ Հետաքրքրական է նաև Հովհաննես Դարդելի վկայությունը, համաձայն որի՝ Ֆիլիպը թագավորեց Զաբելի հետ միասին (12)։ Վերոբերյալ խնդրի մասին որոշակի տեսակետներ են շրջանառվում նաև գիտական գրականության մեջ։ Ժամանակակից հետազոտողներից Վ. Տեր-Ղևոնդյանը, հավանաբար հիմնվելով Գանձակեցու խոսքերի վրա, կարծիք է հայտնում, որ Ֆիլիպի և Զաբելի ամուսնության հարցում իրենց մեծ դերակատարումն են ունեցել նաև Կիլիկյան Հայաստանի հոգևորականները (18)։ Բնականաբար, Հայոց եկեղեցու շահերից էր բխում առավել ջերմ և բարիդրացիական հարաբերություններ հաստատել Արևելքի քրիստոնեական պետությունների հետ։ Սակայն Ֆիլիպը հայոց թագավոր օծվելուց հետո չարդարացրեց հայ ավագանու հույսերը և սկսեց վարել

բացահայտ հակահայ քաղաքականություն, որի պատճառով էլ իր դեմ հանեց Կիլիկիայի իշխանների մեծ մասին և հոգևորականությանը: Իսկ ինչո՞վ էր պայմանավորված Հայոց եկեղեցու ղեկավարության դժգոհությունը նորընծա արքայից: Հետազոտողներից Ս. Տեր-Ներսիսյանը կարծում է, որ նորընծա արքայի քամահրանքը հայկական ծեսի նկատմամբ, ինչպես նաև նրա հովանավորչությունը լատին բարոնների օգտին, զայրացրին հայ ազնվականությանը (19): Կարելի է համաձայնել հետազոտողի հետ, քանզի Ֆիլիպը իր կարճատև գահակալման ժամանակաշրջանում փորձեց ասպարեզից հեռացնել հայրենասեր իշխաններին և ուժեղացնել երկրում կաթոլիկության ազդեցությունը, ինչը չէր կարող առաջ չբերել հայ հոգևոր դասի և մասնավորապես հայոց կաթողիկոսի դժգոհությունը, քանզի վերջիններս տարիներ շարունակ պայքարում էին, որ Կիլիկիայում չուժեղանա ո՛չ քաղկեդոնականների և ո՛չ կաթոլիկների ազդեցությունը: Ավելին. Հեթում Կոռիկոսցու վկայմամբ՝ Ֆիլիպը ցանկանում էր իսպառ ջնջել հայոց եկեղեցիները (8): Հենց դա էր պատճառը, որ Եկեղեցու ղեկավարությունը նույնպես միացավ Ֆիլիպին գահընկեց անելու պահանջին: Շուտով Ֆիլիպը գահընկեց արվեց: Այս հարցում ևս հայ հոգևորականությունն իր որոշակի դերն է ունեցել: Ինչպես նշում է Գ. Միքայելյանը, Կոստանդինը հեղաշրջում կատարելուց առաջ իր կողմն է գրավել կաթողիկոսին և ազդեցիկ իշխաններին (10): Կարելի է համաձայնություն տալ նրա տեսակետին, քանզի հայոց սպարապետը նման քայլեր կատարելուց առաջ պետք է ունենար որոշակի հենարան՝ ի դեմս հայ ազնվականության և բարձրագույն հոգևորականության:

Փաստորեն, Հայոց եկեղեցին և նրա ղեկավարությունը որոշակի ներգրավվածություն են ունենում թե՛ Ֆիլիպի գահակալության և թե՛ գահազրկման հարցում: Մ. Օրմանյանն այս դեպքերի առնչությամբ նշում է, որ իրոք Կոստանդինը համաձայնեցրել է իր գործողությունները հայոց կաթողիկոսի հետ, քանզի թե՛ կաթողիկոսը և թե՛ սպարապետը համոզվեցին, թե՛ ինչպիսի բարդ իրավիճակի մեջ էր հայտնվել հայոց պետությունը օտարազգի տիրակալի գահակալման ժամանակաշրջանում, հետևաբար որոշեցին այս անգամ իրականացնել նոր ծրագիրը (22): Եվ այս նոր քայլը, անշուշտ, պետության ամրապնդմանն ուղղված էական դիրքորոշում էր: Իսկ կարո՞ղ էր արդյոք հայոց կաթողիկոսը դեմ գնալ սպարապետին: Տեսականորեն կարող էր, սակայն վերջինս ընտրվել էր կաթողիկոս սպարապետի աջակցությամբ, իսկ մյուս կողմից էլ հասկանում էր, որ եթե Հայոց եկեղեցին հարեր սպարապետի հակառակորդներին, ապա Կիլիկյան Հայաստանի վիճակը կդառնար անկայուն, որից կարող էին օգտվել նրա հակառակորդները, թեև կաթողիկոսի համար էլ շահեկան չէր լինի պետություն–եկեղեցի հարաբերությունների սրումը:

Քննարկման առարկա ժամանակաշրջանը բավական ծանր էր Կիլիկիայի հայկական պետության համար, քանզի մի կողմից երկիրը չուներ թագավոր և ղեկավարվում էր խնամակալների միջոցով, մյուս կողմից էլ հայոց թագավորությանը սպառնում էին Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, Անտիոքի խաչակիրները, Հալեպի սուլթանությունը և այլ երկրներ: Քաղաքական նմանօրինակ անբարենպաստ պայմաններում չափազանց կարևոր էր պետություն–եկեղեցի համագործակցությունը, ինչպես նաև գահակալի խնդրի լուծումը: Եթե սկզբնական շրջանում Կոստանդինը չհամարձակվեց լուծել գահի խնդիրը հօգուտ որդու, ինչը հայոց սպարապետի վաղեմի երազանքն էր, ապա այս անգամ կարծես հնարավորություններն ավելի մեծացան: Սակայն մինչ կոնկրետ գործողությունների անցնելը, համաձայն Կիրակոս Գանձակեցու, Կոստանդինը դիմում է հայոց կաթողիկոսին և իշխաններին հավանություն ստանալու համար. *«Եւ իշխանն մեծ Կոստանդին հաւանեցոյց զկաթողիկոսն և զայլս ոմանս ի մեծամեծացն՝ թագաւորեցուցանել զորդի իւր զՀեթում. . .»* (4)*:* Հարց է առաջ գալիս նաև, թե ինչո՞ւ սպարապետը դիմեց նաև կաթողիկոսին: Կարծում ենք՝ դրա հիմքում կարող էր ընկած լինել հետևյալը՝

1. Արքայի բացակայության պայմաններում նա պարտավոր էր ստանալ խնամակալ կաթողիկոսի համաձայնությունը:

2. Կոստանդինի համար կարևոր էր ոչ միայն խնամակալ կաթողիկոսի, այլև Հայոց եկեղեցու ղեկավարության դիրքորոշումը:

Թեև հայոց հայրապետը կողմ է եղել այդ ամուսնությանը, սակայն Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Կոստանդինը ստիպեց կաթողիկոսին և Կիլիկիայի իշխաններին համաձայնություն տալու այդ որոշմանը, ընդ որում՝ ոչ բոլորի կողմից է ստացել այդ համաձայնությունը (4): Պատմիչի խոսքերը թերևս վկայում են ոչ թե կաթողիկոսի, այլ Կիլիկիայի իշխաններից ոմանց մասին, որոնք մտավախություն ունեին, որ Հեթումի հետ ամուսնությունից հետո Կոստանդինի իշխանությունը երկրում ավելի կուժեղանար, սակայն ստեղծված պայմաններում սա հավանաբար միակ խելացի որոշումն էր:

Վերոբերյալ պայմանների առկայության ժամանակ նոր խնդիր է ծագում. Զաբել թագուհին դեմ էր այդ ամուսնությանը, ուստի նա որոշեց չենթարկվել և փախավ Սելևկիա: Կիրակոս Գանձակեցին նշում է, որ Կոստանդին սպարապետը գնաց և պաշարեց Սելևկիան, բերեց թագուհուն և բռնի ձևով ամուսնացրեց (4): Այս պատմության մեջ թերևս ամենակարևոր տեղեկությունները հաղորդում է Բար Հեբրաուսը, որի վկայությամբ սկզբում հայոց սպարապետը փորձել է Զաբելի ըմբոստացումը կարգավորել հոգևորականության միջոցով (23):

Զաբելն իմանալով, որ Կոստանդինը ցանկանում է իրեն ամուսնացնել Հեթումի հետ, փորձեց դեմ գնալ սպարապետի ցանկությանը: Անշուշտ, սկզբնական շրջանում սպարապետը չէր ցանկանում ուժ գործադրել, և հավանաբար դա էր պատճառը, որ նա դիմում է հոգևոր դասի օգնությանը՝ մասնավորապես Կոստանդին Բարձրբերդցուն, և խնդրում, որ հայոց կաթողիկոսը մեկնի Սելևկիա՝ համոզելու թագուհուն հետ վերադառնալ: Իսկ ինչո՞ւ սպարապետը դիմեց եկեղեցու ղեկավարի օգնությանը: Կարծում ենք՝ նշյալ պահին թե՛ որպես հոգևոր դասի ղեկավար և թե՛ խնամակալ կարող էր լուծում տալ հարցին: Կաթողիկոսը, հավանաբար կարևորելով երկրի կայունությունը, որոշում է ձեռք մեկնել հայոց սպարապետին և մեկնում է Սելևկիա, որպեսզի առանց ցնցումների հարցը կարգավորի: Լ. Տեր-Պետրոսյանը, որը բավական մանրամասներ է նշում վերը նշված խնդրի առնչությամբ, կարծիք է հայտնում, որ հայոց կաթողիկոսը որոշել է այս գործին խառնել նաև ասորիների պատրիարք Իգնատիոս Բ-ին (20): Թե ինչով էր պայմանավորված նշյալ գործին նաև ասորիների պատրիարքին ներգրավվելու հանգամանքը, դժվար է պատասխանել, սակայն չի բացառվում, որ միգուցե վերջինիս կապերը ևս օգտագործել են խնդիրը կարգավորելու համար: Սակայն իզուր էին թե՛ հայոց սպարապետի և թե՛ հայոց կաթողիկոսի հույսերը, քանզի Զաբել թագուհին ընդառաջ չի գնում հայոց կաթողիկոսի խնդրանքին: Նշյալ խնդրին անդրադարձել է Կիրակոս Գանձակեցին, որը նշում է, որ թագուհին չհամաձայնեց մանկան կինը դառնալ. *«Իսկ թագուհին ոչ հաւանէր լինել կինն մանկանն»* (4): Բնականաբար, Զաբելի կատարած քայլերի մեջ կար տրամաբանություն, քանզի իրեն փորձում էին պարտադրել ամուսնանալու մանկան հետ, թեև մյուս կողմից էլ սա պետության ամրապնդմանն ուղղված կարևոր ձեռնարկում էր: Պատմիչ Բար Հեբրաուսը, որը խոսում է այս դեպքերի մասին, նշում է, որ Զաբել թագուհին ոչ միայն ընդառաջ չգնաց հայոց կաթողիկոսի և մյուսների առաջարկին, այլև որոշակի վիրավորական խոսքեր ուղղեց նրանց հասցեին (23): Հետաքրքիր է, Սմբատ Սպարապետը, որը այս դեպքերի ժամանակակից ականատեսն է, իր «Տարեգրքում» չի նշում կաթողիկոսի Սելևկիա ուղևորության մասին, այլ պարզապես հայտնում է, որ 1226թ. կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցին, իշխանները և եպիսկոպոսները հավաքվեցին Տարսոնում՝ թագավոր ընտրելու երիտասարդ Հեթումին՝ նրան ամուսնացնելով Զաբելի հետ (17): Սակայն Սմբատի տեղեկությունների պակաս հատվածը լրացվում է գրքի մոսկովյան հրատարակության մեջ, որտեղ նշվում են մի շարք մանրամասներ: Մասնավորապես հեղինակը նշում է, որ Հեթումի և Զաբելի ամուսնության գործընթացն այդքան էլ հարթ չի ընթացել, և սկզբնական շրջանում Կոստանդին պայլը փորձել է Սելևկիա փախած Զաբելին վերադարձնել

հայոց կաթողիկոսի միջոցով. *«Եւ յաւուրքս յայս շարժեցաւ դիւական բարկութիւն ի թագուհին Զապէլ. և ուզեց երթալ տեսնուլ զիւր մայրն յԱսպիթլուն բերդն ի Սելևկիա, և գնաց. և խռովեցաւ ընդ թագաւորն և ընդ ամէն Հայք: Նա պարոն Կոստանդին ժողովեց հեծել, ու գնաց իջաւ առաջի Սելևկիոյ. նա ոսպիթալն վանց որ շատ կու ծախվորէր զինքն Սելևկիոյ. ու կու վախին ի Ալատին Սուլթանէն, նա ուզեց տալ զբերդն թագուհովն ու սեր ունենալ ընդ Հայք. . . Եւ այս ցեղ առին զՍելևկայու զթագուհին»* (16):

Դժվար իրավիճակ է առաջանում կաթողիկոսի և Զաբելի համար, քանի որ սա ոչ թե հասարակ ամուսնության խնդիր էր, այլ Կիլիկիայի պետությանն առնչվող կարևորագույն խնդիր: Քանի որ հոգևորականության քայլերը ցանկալի արդյունքի չհասան, Կոստանդինը դիմեց ավելի ակտիվ քայլերի և հսկայական զորքով շարժվեց դեպի Սելևկիա, և որոշակի բանակցություններից հետո հիվանդախնամ ասպետները նահանջեցին, իսկ թագուհին ստիպված ընդունեց Կոստանդին սպարապետի առաջարկը՝ վերադառնալ Կիլիկիա և ամուսնանալ նրա որդու՝ Հեթումի հետ:

Այսպիսով՝ *«Ի թուին ՈՀԵ (իմա՝ 675=1226–ընդգծումը մերն է՝ Ն. Ժ.) ժողովեցան իշխանքն հայոց հանդերձ կաթողիկոսիւն տէր Կոստանդեայ, և եղին թագաւոր զՀեթում որդի Կոստանդեայ պայլոյն Հայոցտալով նմա Զապէլ դուստր թագաւորին Լեւոնի: Եւ յայնմհետէ եղեւ խաղաղութիւն տանն Հայոց...»* (14):

Եզրակացություններ

Վերը բերված տեղեկությունները գալիս են արձանագրելու, որ Հայոց եկեղեցին և նրա ղեկավարությունը բավական ակտիվ դերակատարում են ունեցել 1219-1226 թվականների Կիլիկիայի հայկական թագավորությունում տեղի ունեցող ոչ միայն եկեղեցական, այլև ներքաղաքական կյանքին, ինչն էլ նպաստել է երկրի հետագա զարգացմանը: Բերված իրադարձություններն ու քննարկվող իրողությունները լավագույնս ներկայացնում են Կիլիկիայի հայոց պետության և եկեղեցու փոխհարաբերությունների պատմությունը և վկայում են նշյալ ժամանակաշրջանում Հայոց եկեղեցու հզոր դիրքի և դերակատարության մասին, ինչպես նաև այն համընթաց պետականամետ գործողությունների մասին, որոնք ուղղված են եղել միմիայն հայոց պետականության պահպանմանն ու ամրապնդմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղ. (1885), Սիսուան, Վենետիկ:
2. Անապատական, Համառօտ պատմութիւն Հայ-լատինական յարաբերութեանց, սկիզբէն մինչեւ 1382, Անթիլիաս-Լիբանան, 1981:

3. Բոռնազյան Ս. (1973), Սոցիալ-տնտեսական հարաբերությունները և հասարակական քաղաքական կյանքը Կիլիկյան Հայաստանում 12-14-րդ դարերում, Երևան:
4. Կիրակոս Գանձակեցի (1961), Պատմություն Հայոց, Երևան:
5. Հայ ժողովրդի պատմություն (1976), ակադ. հրատարակություն, հ.Գ, Երևան:
6. Հարությունյան Գ. (2014), Հայոց պատմություն, հտ. բ, միջին դարեր, գիրք երկրորդ (IX դարի կես- XVII դարի առաջին կես), Երևան:
7. Մաթևոսյան Ա. (1986), Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, Երևան:
8. Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դարեր (1956), հտ. բ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան:
9. Միքայել Ասորի (1871), Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, Յերուսաղէմ:
10. Միքայելյան Գ. (2007), Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան:
11. Մութաֆյան Կ. (2001), Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան:
12. Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց (1891), Ս. Պետերբուրգ:
13. Ոսկյան Հ. (1956), Կիլիկիայի վանքերը, Վենետիկ:
14. Սամուել Անեցի (1893), Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ:
15. Սամուէլ Անեցի և Շարունակողներ (2014), Ժամանակագրութիւն, Ադամից մինչեւ 1776 թ., աշխատ.՝ Կ. Մաթևոսյանի, Երևան:
16. Սմբատ Սպարապետ (1956), Պատմություն, Մոսկուա:
17. Սմբատ Սպարապետ (1956), Տարեգիրք, Վենետիկ:
18. Տեր-Ղևոնդյան Վ. (1993), Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական պետությունները 1145-1226 թվականներին, Երևան:
19. Տեր-Ներսեսյան Ս. (2005), Կիլիկյան Հայաստանի թագավորությունը, թարգմանված Լ. Տեր-Պետրոսյանի կողմից, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան:
20. Տեր-Պետրոսյան Լ. (2007), Խաչակիրները և հայերը, հ.Բ, Երևան:
21. Օրմանյան Մ. (2000), Ազգապատում, հտ. Ա, Ս. Էջմիածին:
22. Օրմանյան Մ. (2001), Ազգապատում, հտ. Բ, Ս. Էջմիածին:
23. Bar Habraeus (1932), The Chronography, London.

REFERENCES

1. Alishan Gh. (1885), Sisowan /Sisuan/, Venice,.
2. Anapatakan (1981), Hamar'o't patmowt'iwn Hay-latinakan yaraberowt'eanc, skizbe'n minchew 1382 /Short History of Armenian-Latin Relations (from beginning to 1382)/, Antelias-Lebanon.
3. Bornazian S. (1973), Social-tntesakan haraberowt'yownnery' & hasarakakan qaghaqakan kyanqy' Kilikyan Hayastanowm 12-14-rd darerowm /Social-Economic Relations and Public Political Life in Cilician Armenia from12 -14th Centuries/, Yerevan.
4. Kirakos Gandzaketsi (1961), Patmowt'yown Hayoc /Armenian History/, Yerevan.
5. Hay jhoghovrdi patmowt'yown /The History of Armenian People/ (1976), Academ. public., vol. 3, Yerevan.
6. Harutyunian G. (2014), Hayoc patmowt'yown, ht. b, mijin darer, girq erkrord (IX dari kes- XVII dari ar'ajin kes) /Armenian History, Academ. public., vol. 2, The Middle Ages (Half of the 9th century - first half of the 17th century)/, B.2, Yerevan.
7. Matevosian A. (1986), Hayeren d'er'agreri hishatakaranner. JhG dar /Memoirs of Armenian Manuscripts in 13th Century/, Yerevan.
8. Manr jhamanakagrowt'yownner. XIII-XVIII darer /Small Chronicles from 13-18th Centuries (1956), vol. 2, Compiler; V. Hakobian, Yerevan.
9. Michael Asori (1871), Jhamanakagrowt'iwn Tear'n Mixaye'li Asorwoy patriarqi /The Chronicle of His Holiness Patriarch Michael Asori/, Jerusalem.
10. Michaelian G. (2007), Kilikiayi haykakan petowt'yan patmowt'yown /The History of Armenian State of Cilicia/, Yerevan.
11. Mutafian K. (2001), Kilikian kaysrowt'yownneri xachmerowkowm /On the Crossroads of Cilician Empires/, Yerevan.
12. Yovhannow Dardeli Jhamanakagrowt'iwn Hayoc /The Armenian Chronicle of Hovhannes Dardeli/, (1891), St. Petersburg.
13. Voskian H. (1956), Kilikiayi vanqery' /The Monasteries of Cilicia/, Venice.
14. Samuel Anetsi (1893), Hawaqmownq i groc patmagrac /The Compiles of Historical Writtings/, Vagharshapat.
15. Samuel Anetsi and Continuers (2014), Jhamanakagrowt'iwn, Adamic minchew 1776 t'. /The Chronicles. From Adam to 1776/, Compiler; Matevosian K., Yerevan.

16. Smbat Sparapet (1956), Patmowt'yown /History/, Moscow.
17. Smbat Sparapet (1956), Taregirq /Annals/, Moscow.
18. Ter-Ghevondian V. (1993), Kilikyan Hayastany' & Merd'avor Ar&elqi arabakan petowt'yownnery' 1145-1226 t'vakannerin /Cilician Armenia and Near East Arabic States in 1145-1226/, Yerevan.
19. Ter-Nersesian S. (2005), Kilikyan Hayastani t'agavorowt'yowny' /The Kingdom of Cilician Armenia/, Translation by Ter -Petrosian L., Crusaders and Armenians, vol.2, Yerevan.
20. Ter -Petrosian L. (2007), Xachakirnery' & hayery' /Crusaders and Armenians/, vol.2, Yerevan.
21. Ormanian M. (2000), Azgapatowm /Azgapatum / (The History of Nation), vol.1, St. Ejmiatsin.
22. Ormanian M. (2001), Azgapatowm /Azgapatum /(The History of Nation), vol.2, St. Ejmiatsin.
23. Bar Habraeus (1932), The Chronography, London.

НЕЛЛИ ЖАМКОЧЯН

Из истории взаимоотношений Киликийского Армянского государства и Церкви (1219-1226 гг.)

Заключение

Ключевые слова и выражения: Киликия, государство, церковь, католикос, спарапет, отношения, управление, королева, опекун.

Цель данного исследования – представить историю отношений Киликийского государства и Церкви в период важнейшего и первостепенного значения в истории Киликийской Армении (1219-1226 гг.), подчеркнув роль Армянской Церкви в сохранение и укрепление государственности Киликии. Статья осветила важнейшие события и ключевые эпизоды обсуждаемого периода истории роли Армянской Апостольской Церкви и духовных центров в политической и духовной сфере Киликийской Армении. Освещены также сведения об опекунах Забела Рубиняна, дочери Левона Великого, царя-основателя Киликии, путем объединения трудов средневековых историков, а также точек зрения современной научной литературы, подчеркнув роль Армянской Апостольской Церкви в системе государственного управления.

В центре внимания исследования находятся детали истории проведения новых всеармянских выборов Католикоса, которые прошли в достаточно острых и напряженных условиях после смерти Католикоса Ованнеса Ссеци.

В данном исследовании отражены условия, при которых был избран новый патриарх с помощью Генерала Константина, а также подчеркнута роль Католикоса всех армян и Церкви во внутриполитических событиях государства Киликия, в частности женитьба царицы Забели и Филиппа, сына герцога Антиохийского, потом его смерть, а также подробные сведения о женитьбеЗабела и Хетума, сына Генерала Константина. В статье также были доставлены проблемы решения других важных и спорных вопросов изучения истории взаимоотношений Армянского государства Киликии и Церкви, в результате чего были представлены положение и роль Армянской Церкви. а также активная деятельность церковного руководства в Армянском Киликийском царстве в 1219-1226 гг., не только церковная, но и в рамках внутриполитической жизни, что способствовало дальнейшему развитию страны.

Nelly Zhamkochyan

From the history of relations between the Armenian state of Cilicia and the Church (1219-1226)

Conclusion

Key words and expressions: Cilicia, State, Church, Catholicos, Sparapet, relations,administration, Queen, guardian.

The goal of this article is to study the history of the relations between the Cilician State and the Church during the period of the most important and paramount importance in the history of Cilician Armenia (1219-1226). It emphasizes the role of the Armenian Church in maintaining and strengthening the Statehood of Cilicia. Studying the most important events during the discussed period, thiswork covers the key episodes of the history of the role of the Armenian Apostolic Church and Spiritual centers in the political and spiritual sphere of Cilician Armenia. The data about the guardians of Zabel Rubinyan (the daughter of Levon Metsagorts (Levonthe Great), the founder King of Armenian Cilicia) were also highlighted by combining the works of medieval historians, as well as the points of view in modern scientific literature, emphasizing the role of the Armenian Apostolic Church in the State administration system.

This study focusedonthe details of the history of holding Armenian newCatholicos elections, taken place under rather acute and tense conditions after the death of Armenian Catholicos Hovhannes Ssetsi.

In this article, the details werepresentedabout the conditions under which the new Catholicoshad been elected with the help of Generale Constantine (Constantinethe Sparapet), emphasizing the role of the Catholicos of All

Armenians and the Church in the internal political developments of the State of Cilicia, in particular about the marriage of Zabeland Philip, the son of the Duke of Antioch, and the death of Philip, as well as about the detailed information on the marriage of Zabel and Hetum, the son of the Generale Constantine.

During the study, this article discusses the problems of settlement of other important and controversial issues of the history of the relationship between the Armenian State of Cilicia and the Church.As a result of these activities, the position and role of the Armenian Church are presented, as well as the functions of the Church leadership in the Armenian Kingdom of Cilicia in 1219-1226, not only ecclesiastical, but also within the framework of domestic political life, which contributed to the further development of the country.

Նելլի Ժամկոչյան- Երևանի պետական համալսարան, Աստվածաբանության և Հայ եկեղեցու պատմության ամբիոնի հայցորդ, ավագ լաբորանտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց պատմություն, աստվածաբանություն, եկեղեցու պատմություն, աշխարհագրություն:
nelli.zhamkochyan@ysu.am

Нелли Жамкочян – Ереванский Государственный Университет, соискатель кафедры теологии и истории Армянской церкви, старший лаборант. Научные интересы: история Армении, богословие, история церкви, география.
nelli.zhamkochyan@ysu.am

Nelly Zhamkochyan – Yerevan State University, applicant of the Chair of Theology and Historyof the Armenian Church, senior laborant. Scientific interests: Armenian history, theology, Church history, geography.
nelli.zhamkochyan@ysu.am

Խմբագրություն է ուղարկվել 30.11.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 12.12.2023թ.
Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ